COUNCIL OF RECTORS
HIGHER EDUCATIONAL
ESTABLISHMENTS

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՌԵԿՏՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

СОВЕТ РЕКТОРОВ
ГОСУДАРСТВЕННЫХ ВЫСШИХ
УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
հեռ.՝ (+374-60) 71-00-71, 71-00-00 rector@ysu.am, www.ysu.am

08 դեկտեմբերի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհուրդը 04.12.2020թ.-ի նիստում քննարկել է ՀՀ կառավարության 03.12.2020թ.-ի նիստում հաստատված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ), որի արդյունքներով ստորև ներկայացնում ենք սկզբունքային առարկություններ և նկատառումներ:

1. **Բուերի հավատարմագրումը.**

Նախագծով սահմանված են բուհերի և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային պարտադիր հավատարմագրման պահանջներ: Մասնավորապես, համաձայն նախագծի 39-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բուհերի առաջին և երկրորդ մակարդակների (այդ թվում՝ ինտեգրված ծրագրի) կրթական ծրագրերն ենթակա են ծրագրային հավատարմագրման մինչև **2024 թվականի սեպտեմբերի 1-ը,** բացառությամբ բժշկական և մանկավարժական ուղղվածությամբ կրթական ծրագրերի, որոնք ենթակա են պարտադիր ծրագրային հավատարմագրման մինչև **2022 թվականի սեպտեմբերի 1-ը,** իսկ երրորդ մակարդակի կրթական ծրագրերը՝ **մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը»**:

Բացի այդ, նախագծի 14-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝ «Սահմանված ժամկետում ինստիտուցիոնալ հավատարմագրման չդիմելու կամ ինստիտուցիոնալ հավատարմագրումն երկու անգամ անընդմեջ մերժվելու դեպքում բուհի կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, իսկ **լիցենզիան ճանաչվում է ուժը կորցրած»** և «Սահմանված ժամկետում ծրագրային հավատարմագրման չդիմելու կամ ծրագրային հավատարմագրումն երկու անգամ անընդմեջ մերժվելու դեպքում բուհի կրթական

ծրագրի իրականացման լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, իսկ տվյալ կրթական ծրագրի մասով **լիցենզիան ճանաչվում է ուժը կորցրած:»**

Այս կապակցությամբ գտնում ենք, որ

- ***և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման պարտադիր լինելու պայմանն անհրաժեշտ է հանել՝ թողնելով միայն ինստիտուցիոնալ հավատարմագրման պարտադիր լինելու պահանջը:***

  Նախ, ինստիտուցիոնալ հավատարմագրման առանցքային չափանիշներից մեկը հենց կրթական ծրագրերն են և ինստիտուցիոնալ հավատարմագիր ունեցող բուհն արդեն իսկ հավաստել է, որ հավատարմագրողի կողմից ընտրողաբար գնահատված մասնագիտությունները՝ իրենց կրթական ծրագրերով, ևս որակյալ են: Իսկ, եթե հաշվի առնենք, որ ինստիտուցիոնալ հավատարմագրումը կատարվում է 4 (բացառիկ դեպքերում 6 տարի) շրջափուլով, ապա ակնհայտ է, որ մի քանի հաջորդական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու դեպքում, բուհի կրթական ծրագրերի մեծամասնությունը ևս անցնում է արտաքին գնահատում և որակի հավաստում: Հարց է ծագում, թե այդ պարագայում ինչու՞ և ի՞նչ տրամաբանությամբ զուգահեռաբար նույն ծրագրերը կրկին պետք է անցնեն հավատարմագրում: Այս պահանջը բուհերին առնվազն գալիք 4 տարում պահելու է անդադար հավատարմագրումների փակ շղթայի մեջ:

  Երկրորդ, և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման գործընթացները խիստ ծախսատար են, և նախագծով սահմանված ժամկետներում դրանց իրականացումը կտրուկ կավելացնի բուհերի ֆինանսական ծախսերը՝ այդ գործընթացների կազմակերպումը դարձնելով անհնարին կամ բուհերին կանգնեցնելով ֆինանսական ճգնաժամի առջև:

  Երրորդ, սահմանված ժամկետներում միաժամանակ ինստիտուցիոնալ և բոլոր կրթական ծրագրերի հավատարմագրման պայմանի պահպանման դեպքում, բուհերը կհայտնվեն գերծանրաբեռնված վիճակում՝ իրենց աշխատակազմի աշխատանքային ժամանակը և ջանքերը ուղղելով ամենատարբեր բնույթի բազմաձավալ փաստաթղթերի, ինքնագնահատման և այլ հաշվետվությունների պատրաստմանը, փորձագետների հետ աշխատելուն, ինչը հղի է բուհի առանցքային և հիմնական գործընթացների (ուսումնական և գիտահետազոտական) կազմալուծման՝ բացասաբար անդրադառնալով կրթության որակի վրա:

  Վերջապես, մեկ տարվա ընթացքում անգամ 2-ից 3 բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում ներկայումս առաջանում է անհրաժեշտ թվով փորձագետներ գտնելու լուրջ դժվարություն, իսկ 4 տարվա ընթացքում ՀՀ բոլոր բուհերի բոլոր կրթական ծրագրերը, որոնց հանրագումարային թիվը գերազանցում է 500-ը, հավատարմագրելու համար անհրաժեշտ կլինի գտնել հազարներով որակյալ փորձագետներ: Այս պարագայում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը չի կարողանալու սահմանված ժամկետում ապահովել

օրենքի համապատասխան դրույթների կատարումը՝ ստիպված լինելով կա՛մ խախտել օրենքի դրույթները, կա՛մ որպես փորձագետ ներգրավել անփորձ, ոչ կոմպետենտ անձանց՝ ամբողջապես արժեզրկելով հավատարմագրման գործընթացը:

Ավելորդ չէ նաև նշել, որ միջազգային պրակտիկայում չի կիրառվում միաժամանակ և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման պարտադիր լինելու պայման: Պարտադիր է սահմանվում կա՛մ ինստիտուցիոնալ, կա՛մ ծրագրային հավատարմագրումը: Ուստի, նշված դրույթը հակասում է նաև միջազգայնորեն կիրառվող նորմերին:

2. **Բուհի լիցենզավորումը.**

Բուհերին անժամկետ տրված լիցենզիաների ուժը կորցրած ճանաչելու անցումային դրույթն առհասարակ անհրաժեշտ է բացառել՝ հետևյալ պատճառներով.

- Նախագծի 39-րդ հոդված 2-րդ մասով նախատեսված է, որ ՀՀ բոլոր բուհերին անժամկետ տրված լիցենզիաները գործում են մինչև 2021 թ.-ի նոյեմբերի 30-ը, դրանց գործողությունը դադարում է ***2021 թ.-ի դեկտեմբերի 1-ից,*** և մինչև 2021 թ.-ի սեպտեմբերի 1-ը բուհերը պետք է դիմեն նոր լիցենզիաներ ստանալու կամ գործող լիցենզիաները վերաձևակերպելու համար, ընդ որում՝ այդ գործընթացը պետք է իրականացվի նախագծի 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Իսկ նախագծի 39-րդ հոդված 1-ին մասով սահմանված է, որ 14-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ***լիցենզավորման պարտադիր պայմաններն ու պահանջները*** պետք է սահմանվեն կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերով, որոնք պետք է հաստատի ՀՀ կառավարությունը մինչև ***2022 թ.-ի սեպտեմբերի 1-ը***: Այսինքն, համադրելով վերոնշյալ ժամկետները ակնհայտ է դառնում, որ բուհերը պետք է դիմեն նոր լիցենզիաներ ստանալու կամ իրենց լիցենզիաները վերաձևակերպելու ՀՀ կառավարության կողմից համապատասխան կարգերի ընդունումից մեկ տարի առաջ, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ կա՛մ նոր լիցենզիաները տրամադվելու են գործող կարգերի համաձայն, կա՛մ դրանց տրամադրումը հետաձգվելու է առնվազն մեկ տարի մինչև նոր կարգերի հաստատումը՝ հանգեցնելով բուհերի գործունեության դադարեցմանը առնազն մեկ տարի: Մինչդեռ գործող օրենքով և կարգերով բոլոր բուհերը ներկայումս լիցենզավորված են:
- Միևնույն ժամանակ, բուհերին տրված լիցենզիաները՝ ըստ գործող օրենքի, անժամկետ են, իսկ որակի վերահսկողության և լիցենզայի գործողությունը դադարացնելու պետական գործիքը հավատարմագրումն է: Ընդ որում, սույն նախագծի 14-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված է, որ սահմանված ժամկետում հավատարմագրման չդիմելու կամ հավատարմագրումն երկու անգամ անընդմեջ մերժվելու դեպքում բուհի կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը

դադարեցվում է, իսկ լիցենզիան ճանաչվում է ուժը կորցրած: ***Ուստի, նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասը անիմաստ է և ոչ իրավաչափ, քանի որ լիցենզիայի գործողությունը չի կարող դադարեցվել արդեն իսկ հավատարմագրում ստացած բուհերի պարագայում:***

3. **Ընդունելությունը բուհ .**

Նախագծում հստակ չեն բուհ ընդունելության մեխանիզմները և սկզբունքները, որոնք պետք է հստակեցվեն: Մասնավորապես.

- Նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Ընդունելություն իրականացնող բուհերը համապատասխան ուսումնական տարվանից **ոչ ուշ, քան երկու տարի առաջ,** հրապարակում են ըստ կրթական ծրագրերի և դրանց ընդունելության համար անհրաժեշտ մուտքային պահանջ հանդիսացող հանրակրթական համապատասխան առարկաների **արտաքին գնահատման** վկայագրերի ցանկը»: Կարծում ենք, որ բուհերը պետք է հրապարակեն ընդունելության պահանջները ըստ կրթական ծրագրերի՝ ներառյալ այն հանրակրթական առարկաների ցանկը, որոնցից պահանջվում է արտաքին գնահատում, իսկ լիազոր մարմինը՝ սահմանի արտաքին գնահատման թույլատրելի վկայագրերի ցանկը: Նշված դրույթից ենթադրվում է, որ օրինակ՝ ցանկում կարող է որպես անգլերեն լեզվի արտաքին գնահատման վկայագիր ներառվել TOEFL թեստի արդյունքը: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 6-րդ մասով հստակ սահմանված է, որ ընդունելության մրցույթին մասնակցելու համար բուհին պետք է ներկայացվեն պետության լիազորած մասնագիտացված կազմակերպության կողմից կազմակերպած գիտելիքների ստուգման վկայագրեր: Անհրաժեշտ է նաև կատարել տերմինների հստակեցում՝ պարզաբանելով, թե արդյոք արտաքին գնահատում և գիտելիքի ստուգում եզրույթները ենթադրում են նույն գործառույթը, թե ոչ:
- Նախագծի 17-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է միայն անվճար (պետական կրթաթոշակ ստացող) դիմորդների ընդունելության սկզբունքը՝ չպարզաբանելով, թե ինչպես է կազմակերպվելու վճարովի հիմունքներով ընդունելությունը:

4. **Բուհի կառավարումը և կառավարման մարմինները.**

Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգում հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ և ոլորտին վերաբերող այլ նորմատիվ իրավական ակտերով: Սակայն, նախագծում խախտված է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժ չունենալու մասին սահմանադրական սկզբունքը: Այսպես.

- Անխախտելի է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժ չունենալու մասին սահմանադրական դրույթը, որի համաձայն բուհի գործող ռեկտորը, որն օրենքով սահմանված կարգով բուհի կառավարման մարմնի կողմից ընտրվել է, պետք է շարունակի պաշտոնավարել մինչև հինգ տարին

լրանալը: Մինչդեռ նախագծի 39-րդ հոդվածի 13-րդ մասով լիազոր մարմնի ղեկավարին վերապահվել է իրավունք՝ հինգ տարուց ոչ ավելի ժամկետով նշանակել բուհի ռեկտոր, անկախ նրա ընտրված լինելու հանգամանքից:

- Հատկանշական է նաև, որ նախագծի 39-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի 36-րդ հոդվածի 14-րդ մասում նախատեսված կարգավորումները չեն տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը»: Համանման իրավաչափ կարգավորումներ նախատեսված են նաև նախագծի 39-րդ հոդվածի 7-րդ և 15-րդ մասերում: Այսինքն, բուհի 65 տարին լրացած ակադեմիական կազմի ներկայացուցիչները և վարչական պաշտոնում նշանակված (ընտրված) անձինք պաշտոնավարում են մինչև իրենց պայմանագրերի ժամկետի լրանալը: Ուստի, նախագծում խախտված են սահմանադրական ևս երկու սկզբունք. **խտրականության արգելքը** (ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդված) և **օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը** (ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված):
- ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «**Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը**»: Նշված սկզբունքը ամրագրված է նաև Բոլոնյան հռչակագրով: Մի կողմից, նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված է բուհերի **ինքնավարության և ակադեմիական ազատության սկզբունքը,** իսկ նախագծի 3-րդ հոդվածի 38-րդ և 40-րդ կետերում 6-րդ հոդվածում՝ բուհական ինքնավարության և հաշվետվողականության մասին հիմնարար դրույթները: Մյուս կողմից, նախագծի 39-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված է, որ լիազոր մարմնի ղեկավարը միանձնյա որոշմամբ, այն էլ՝ թեկնածուի նշանակման չափանիշները և արգելքները շրջանցելով, իր հայեցողությամբ նշանակում է ռեկտոր՝ մինչև 5 տարի ժամկետով: Վերջինս բուհերի ինքնավարության սահմանադրական նորմի կոպտագույն խախտում է:
- Նախագծի 39-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ **հանրային բուհերի կառավարման խորհուրդները ձևավորվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում**, իսկ 39-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն մինչ խորհրդի ձևավորումը լիազոր մարմնի ղեկավարը նշանակում է ռեկտոր: Հարց է ծագում՝ մի՞թե հոգաբարձուների խորհրդի կազմ ձևավորելը՝ 12 անձ ընտրելը, պետք է տևի մինչև մեկ տարի, ինչու՞ է ռեկտորը նշանակվում մինչև խորհրդի ձևավորումը և ինչու՞ գործող ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի համաձայն նշանակվում է ոչ թե ռեկտորի պաշտոնակատար մինչև մեկ տարի ժամկետով, այլ՝ ռեկտոր, այն էլ **հինգ տարի տարուց ոչ ավելի ժամանակով:**
- Նախագծի 39-րդ հոդվածի 13-րդ մասով, դարձյալ **խտրականության արգելքի և օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքների**

խախտմամբ, սահմանված է, որ լիազոր մարմնի կողմից նշանակված ռեկտորի նկատմամբ չեն կիրառվում 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև 31-րդ հոդվածի 2-րդ մասը: Մասնավորապես չեն կիրառվում՝

- ✓ ռեկտորի թեկնածուների համար սահմանված պարտադիր որակական չափանիշները,
- ✓ խորհրդի կողմից ռեկտորին անվստահություն հայտնելու մասին որոշման կայացումը,
- ✓ խորհրդի կողմից ռեկտորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման կայացումը:

Արդյունքում՝ ռեկտորի վերաբերյալ նախագծում ամրագրված հիմնական իրավակարգավորումները մեկ անցումային հոդվածով ի չիք են դառնում, վերածվում ինքնանպատակ դրույթների, և հնարավորություն ընձեռնում ցանկացած անձի նշանակվել բուհի ռեկտորի պաշտոնում ու առանց որևէ լուրջ վերահսկողության պաշտոնավարել հինգ տարի շարունակ:

- Հակասություն է առկա նաև նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ մասերի և 39-րդ հոդվածի 13-րդ մասի միջև: Այսպես, նախագծի 31-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն. «Նոր ստեղծվող կամ վերակազմավորման, բաժանման, միաձուլման ձևով վերակազմակերպվող բուհում **մինչև կառավարման խորհրդի ձևավորումը համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը նշանակում է ռեկտորի պաշտոնակատար (ուշադրություն դարձրեք, որ այս նորմում իրավացիորեն նշված է պաշտոնակատար) մեկ տարուց ոչ ավելի ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 39-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված դեպքերի**», իսկ ինչո՞վ է պայմանավորված նախագծի 31-րդ հոդվածում արված այս բացառությունը կամ 39-րդ հոդվածի նշված վերապահումը՝ հասկանալի չէ:
- Նախագծի 27-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ բուհի կառավարման խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը տվյալ բուհում զբաղեցնում է վարչական պաշտոն: Նշված դրույթը հակասում է նախագծի 36-րդ հոդվածի 16-րդ մասի 1-ին կետին, որի համաձայն՝ բուհի աշխատողն իրավունք ունի ընտրելու և ընտրվելու բուհի կառավարման մարմիններում, և խախտում է **խտրականության արգելքի և օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքները:** Ավելին, քանի որ կառավարման խորհուրդը իրականացնում է կառավարչական գործառույթներ, վարչական աշխատողների ընդգրկումը խորհրդում կնպաստի վերջինիս գործունեության արդյունավետության բարձրացմանը: ***Առաջարկում ենք հանել 39-րդ հոդվածի 13-րդ մասը և 27-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետը:***

5. **Ուսանողների նպաստի ձևով փոխհատուցում ստանալու իրավունք.**

Նախագծի 34-րդ հոդված 6-րդ մասի համաձայն՝ ըստ էության վերանում է ուսանողների փոխատեղման սկզբունքը, որը կհանգեցնի մրցակցային միջավայրի բացակայության և ուսանողների մոտիվացիայի նվազմանը:

Առաջարկում ենք փոփոխել նշված դրույթը՝ պահպանելով ներկայումս գործող և իրեն արդարացրած համակարգը:

6. **Բուհի աշխատողները.**

Նախագծի 36-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով և 31-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են տարիքային սահմանափակումներ (մինչև 65 տարեկան) բուհի ակադեմիական (դասախոսական) և վարչական աշխատակիցների՝ ներառյալ ռեկտորի համար, որոնք որոշակիորեն հակասություն ունեն ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի հետ, որով արգելված է ցանկացած տեսակի խտրականության դրսևորումը, այդ թվում՝ տարիքի հանգամանքով:

Դեռևս 2011 թվականին ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանել է, որ. «...աշխատանք ընտրելու իրավունքը պետք է բոլորի համար երաշխավորված լինի՝ անկախ տարիքային սահմանափակումից: Կենսաբանական այնպիսի գործոնը, ինչպիսին մարդու տարիքն է, որն ինքնին միանշանակ չի կարող ներգործել տվյալ անձի աշխատունակության և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների վրա, չի կարող դիտարկվել որպես աշխատանքից ազատելու հիմք»:

Առաջարկում ենք նախագծից հանել 36-րդ հոդվածի 14-րդ, 15-րդ մասերը և 31-րդ հոդվածի 3-րդ մասը, քանի որ նշված հարցը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Եզրակացություն

Առաջարկվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը վերանայել ՀՀ Ազգային ժողովի նիստի օրակարգում ընդգրկելուց առաջ՝ հաշվի առնելով վերը նշված առաջարկությունները և դիտողությունները:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհրդի նախագահ՝ Գ. Գևորգյան

Կատարող՝ Ա. Իսրայելյան
Հեռ.՝ (060) 71-01-11